

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Մարզկենտրոնը՝ ք. Հրազդան

ՀՀ Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնում:



Մարզը սահմանակից է.

- հարավ-արևմուտքից՝ մայրաքաղաքին,
- արևմուտքից՝ ՀՀ Արագածոտնի,
- հյուսիսից՝ Լոռու,
- հյուսիս-արևելքից՝ Տավուշի,
- արևելքից՝ Գեղարքունիքի և
- հարավից՝ Արարատի մարզերին:

Տարածաշրջանները՝

Հրազդան,
Կոտայք,
Նաիրի

Քաղաքները՝

Հրազդան,
Աբովյան,
Չարենցավան,
Բյուրեղավան,
Ծաղկաձոր,
Եղվարդ,
Նոր Հանն

Վարչատարածքային բաժանումը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ

| | Տարածքը, քառ. կմ | Մայրաքաղաքը/մարզ-կենտրոնը | Բնակչության խտությունը, մարդ/կմ ² | Համայնքներ | | Մարզ-կենտրոնի հեռավորությունը Երևանից, կմ * |
|---------------------------|------------------|---------------------------|--|------------|-----------|---|
| | | | | քաղաքային | գյուղական | |
| Հայաստանի Հանրապետություն | 29743 | Երևան | 109 | 48 | 866 | - |
| ՀՀ Կոտայքի մարզ | 2089 | Հրազդան | 133 | 7 | 60 | 50 |

ՀՀ Կոտայքի մարզի քաղաքները

(հունվարի 1-ի դրությամբ)

| Քաղաքի անվանումը | Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը | Հեռավորությունը մինչև Երևան, կմ | Մշտական բնակչության թվաքանակը, հազ.մարդ | | | | |
|------------------|-------------------------------------|---------------------------------|---|------|------|------|------|
| | | | 2005 | 2006 | 2007 | 2008 | 2009 |
| Արովյան | 1963 | 18 | 44.8 | 45.0 | 45.4 | 45.7 | 46.0 |
| Բյուրեղավան | 1995 | 24 | 8.2 | 8.3 | 8.3 | 8.3 | 8.4 |
| Եղվարդ | 1995 | 18 | 12.0 | 12.0 | 12.1 | 12.2 | 12.2 |
| Ծաղկաձոր | 1984 | 55 | 1.6 | 1.6 | 1.6 | 1.6 | 1.6 |
| Նոր Հաճն | 1991 | 30 | 10.1 | 10.2 | 10.2 | 10.3 | 10.3 |
| Հրազդան | 1959 | 50 | 52.9 | 52.8 | 52.8 | 52.9 | 52.9 |
| Չարենցավան | 1983 | 36 | 24.6 | 24.6 | 24.7 | 24.8 | 24.8 |

* Ըստ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2008թ. ճշգրտված տվյալների:

| | |
|--|----------------|
| Տարածքը | 2089 քառ.կմ |
| ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը | 7 % |
| Քաղաքային համայնքներ | 7 |
| Գյուղական համայնքներ | 60 |
| Քաղաքներ | 7 |
| Գյուղեր | 62 |
| Բնակչության թվաքանակը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ | 278.8 հազ.մարդ |
| <i>այդ թվում՝</i> | |
| քաղաքային | 156.2 հազ.մարդ |
| գյուղական | 122.6 հազ.մարդ |
| ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2008թ. | 8.6 % |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը | 56.0 % |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր | 161667 հա |
| <i>այդ թվում՝ վարելահողեր</i> | 38057 հա |

Մարզի տարածքը հնում մտել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի մեջ՝ զբաղեցնելով հիմնականում Կոտայք և Նիգ գավառները:

Մարզի տարածքը հարուստ է տարբեր դարաշրջաններին պատկանող պատմամշակութային և հոգևոր կառույցներով:

Մարզում է գտնվում Աբովյանի (Էլար) կիկլոպային ամրոցը, Գառնիի Միիր աստծո ամրոցը և տաճարը (I դ), Գառնիի սբ. Մաշտոցի մատուռը, Ողջաբերդի գմբեթավոր եկեղեցին (V դ), Արզնու եկեղեցին (VI դ), Գեղարդի վանքը (XII-XIIIդդ), Կարենիսի վանքը (VII դ), Բջնիի սբ.Աստվածածնի վանքը (XI դ), Մաքրավանքը (XIII դ), Կեչառիսի վանքային համալիրը (XI-XIII դդ), որտեղ ներկայումս գտնվում է Կոտայքի թեմի առաջնորդարանը, Եղվարդի սբ.Աստվածածին եկեղեցին (Vդ), Արզականի նեղուցի սբ. Աստվածածին եկեղեցին (XIII դ), Բուժականի Թեղենյաց վանքը և այլն:

ՀՀ Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան և Ագատ գետերը: **Հրազդան գետը** (նախկին անվանումը՝ Զանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կան 340 վտակներ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը:

Ազատ գետը նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

Մարզը հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջինի» և «Արզնի» հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2528 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Արայի լեռը (բարձրությունը՝ 2577մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1200 – 1300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1700 – 1800 մ բարձրության վրա):

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ **Կոտայքի մարզը** զբաղեցնում է ՀՀ տարածքի 7%-ը: **Մարզի** տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

2008թ.-ին **մարզի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 12.2 %,
- գյուղատնտեսություն՝ 10.0 %,
- շինարարություն՝ 1.9 %,
- մանրածախ առևտուր՝ 2.7 %,
- ծառայություններ՝ 1.6 %:

ՀՀ Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն **արդյունաբերությունն է**: Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություններ:

Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

- ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն (պողպատի և թուջի ձուլում),

դ) կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն (ոսկերչական իրերի և կից ապրանքների (ադամանդի) արտադրություն):

Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Արոլյան քաղաք

Արոլյան քաղաքը (խորհրդային տարիներին՝ մինչև 1961թ.-ը՝ գյուղ Էլար, 1961-1963թթ.՝ գյուղ Արոլյան, 1963թ.-ից՝ քաղաքի կարգավիճակով): Բնակչության թվաքանակը 2008թ. տարեվերջին կազմել է 46.0 հազ. բնակիչ:

Գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում գարեջրի արտադրությունը:

Բյուրեղավան քաղաք

Բյուրեղավան քաղաքի (2008թ. տարեվերջին՝ 8.4 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 24 կմ հեռավորության վրա) արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ապակե տարայի, ճենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

Բյուրեղավան քաղաքը, որպես բնակավայր, հիմնադրվել է 1945թ., ունի 8.2 հազ. բնակիչ: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ապակե տարայի, ճենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

Եղվարդ քաղաք

Եղվարդ քաղաքը (2008թ. տարեվերջին՝ 12.2 հազ. բնակիչ) գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է: Եղվարդը հին բնակավայր է: Առաջին գրավոր տեղեկությունները կապված են 603թ.-ի Հայ-պարսկական պատերազմի հետ:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (թորած ալկոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի, այլուրի արտադրությունը, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունը):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև **գյուղատնտեսությունը**, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է:

Նոր Հաճն քաղաք

Նոր Հաճն քաղաքի (2008թ. տարեվերջին՝ 10.3 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 30 կմ է) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրությունը (ոսկերչական արտադրատեսակների (ադամանդի) արտադրությունը):

Հրազդան քաղաք

Հրազդան քաղաքի (խորհրդային տարիներին՝ 1959թ.-ը՝ Ներքին Ախտա): Բնակչության թվաքանակը 2008թ. տարեվերջին կազմել է 52.9 հազ. բնակիչ: Քաղաքի հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Հրազդանի հին բնակիչները գաղթել են Մակուից, Սալմաստից, Սասունից, Կարսից: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է Հանրապետությունում: Քաղաքի արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն):

Չարենցավան քաղաք

Չարենցավան քաղաքը (խորհրդային տարիներին, մինչև 1967թ.-ը՝ Լուսավան, 2008թ. տարեվերջին՝ 24.8 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 36 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: Քաղաքը հիմնադրվել է 1948թ.-ին, որպես Գյումուշ ՀԷԿ-ի (այժմ՝ Սևան-Հրազդան կասկադ) բանվորական ավան: Չարենցավան է կոչվել ի պատիվ հայ մեծ

բանաստեղծ Ե. Չարենցի: 1953թ. ՀԵԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ և Չարենցավանը դարձավ հանրապետության կարևոր արդյունաբերական կենտրոն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

Ծաղկաձոր քաղաք

Ծաղկաձոր քաղաքի (մինչև խորհրդային տարիները՝ Կեչառիս, խորհրդային տարիներին, մինչև 1947թ.-ը՝ Դ-արաչիչակ):

Ծաղկաձորը հնում կոչվել է Ծաղկոցաձոր (հետագայում՝ Ծաղկունյաց ձոր) և մտել է Մեծ Հայքի Վարաժնունիք գավառի մեջ:

Այն պատկանել է Վարաժնունի նախարարական տանը: Եղել է Հայոց Արշակունի թագավորների ամառանոցը:

IX դարից հետո պատկանել է Պահլավունի տոհմին:

Այստեղ է գտնվում Կեչառիսի վանքային համակարգը, որը կառուցվել է Սյունյաց գեղատես օրհորդ Սոֆիի կողմից:

Ծաղկաձորում է ծնվել Լևոն Օրբելին, այստեղ է գտնվում Լևոն և Հովսեփ Օրբելի եղբայրների տուն-թանգարանը:

Բնակչության թվաքանակը 2008թ. տարեվերջին կազմել է 1.6 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 55 կմ հեռավորության վրա : Կլիման մեղմ է և առողջարար: Առողջարանային քաղաք է:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

| Համայնքի անվանումը | Բնակավայրի անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը *, մարդ | |
|--------------------|----------------------|---------------------------------------|-------------------------------|
| | | 2008թ. հունվարի 1-ի դրությամբ | 2009թ. հունվարի 1-ի դրությամբ |
| Հրազդան | ք. Հրազդան | 52855 | 52949 |
| Աբովյան | ք. Աբովյան | 45745 | 46032 |
| Բյուրեղավան | ք. Բյուրեղավան | 8345 | 8402 |
| Եղվարդ | ք. Եղվարդ | 12191 | 12212 |
| Ծաղկաձոր | ք. Ծաղկաձոր | 1610 | 1608 |
| Նոր Հաճն | ք. Նոր Հաճն | 10252 | 10294 |
| Չարենցավան | ք. Չարենցավան | 24806 | 24771 |

* ՀՀ Կոտայքի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:

ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

| | Համայնքի անվանումը | Բնակավայրի անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը** , մարդ | |
|----|--------------------|------------------------|--|-------------------------------|
| | | | 2008թ. հունվարի 1-ի դրությամբ | 2009թ. հունվարի 1-ի դրությամբ |
| 1 | Ալափարս | | 2376 | 2397 |
| 2 | Ակունք | | 1988 | 1976 |
| 3 | Աղավնաձոր | | 1391 | 1402 |
| 4 | Առինջ | | 5385 | 5520 |
| 5 | Արագյուղ | | 1313 | 1368 |
| 6 | Արամուս | | 3684 | 3722 |
| 7 | Արզել | | 3328 | 3245 |
| 8 | Արզական | | 2906 | 2938 |
| 9 | Արզնի | | 2529 | 2563 |
| 10 | Արտավազ | • Արտավազ • Փյունիկ | 1103 | 1108 |
| 11 | Բալահովիտ | | 3542 | 3551 |
| 12 | Բջնի | | 2778 | 2860 |
| 13 | Բուժական | | 1667 | 1753 |
| 14 | Գանոնի | | 7624 | 7118 |
| 15 | Գեղադիր | | 706 | 707 |
| 16 | Գեղաշեն | | 3965 | 4328 |
| 17 | Գեղարդ | | 470 | 467 |
| 18 | Գետամեջ | | 670 | 643 |
| 19 | Գետարզել | | 819 | 828 |
| 20 | Գողթ | | 2135 | 2132 |
| 21 | Զառ | | 1365 | 1444 |
| 22 | Զովաշեն | | 164 | 164 |
| 23 | Զովունի | | 5288 | 5440 |
| 24 | Զովք | | 945 | 973 |
| 25 | Զորավան | | 1566 | 1572 |
| 26 | Թեղենիք | | 681 | 693 |
| 27 | Լեռնանիստ | | 3080 | 3107 |
| 28 | Կաթնաղբյուր | | 626 | 670 |
| 29 | Կամարիս | | 2405 | 2420 |
| 30 | Կապուտան | | 1317 | 1480 |
| 31 | Կարենիս | | 970 | 854 |
| 32 | Կոտայք | | 1792 | 1836 |
| 33 | Հանքավան | | 135 | 149 |
| 34 | Հատիս | | 359 | 358 |

** ՀՀ Կոտայքի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2009թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.4%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

| | Համայնքի անվանումը | Բնակավայրի անվանումը | Մշտական բնակչության թվաքանակը** , մարդ | |
|----|-----------------------|-------------------------|--|----------------------------------|
| | | | 2008թ. հունվարի 1-ի դրությամբ | 2009թ. հունվարի 1-ի դրությամբ |
| 35 | Հացավան | | 610 | 680 |
| 36 | Զորադրյուր | | 2159 | 2361 |
| 37 | Մայակովսկի | | 2096 | 2161 |
| 38 | Մարմարիկ | | 871 | 879 |
| 39 | Մեղրաձոր | • Մեղրաձոր • Գոռգոչ | 2863 | 2884 |
| 40 | Մրգաշեն | | 2043 | 2194 |
| 41 | Նոր Արտամետ | | 1046 | 1262 |
| 42 | Նոր Գեղի | | 6038 | 6110 |
| 43 | Նոր գյուղ | | 1411 | 1554 |
| 44 | Նոր Երզնկա | | 1726 | 1689 |
| 45 | Նումնուս | | 538 | 536 |
| 46 | Ողջաբերդ | | 1016 | 1011 |
| 47 | Պոռոշյան | | 5240 | 5255 |
| 48 | Պտղնի | | 1395 | 1447 |
| 49 | Ջրաբեր | | 526 | 534 |
| 50 | Ջրառատ | | 603 | 621 |
| 51 | Ջրվեժ | | 7208 | 7536 |
| 52 | Սարալանջ | | 339 | 305 |
| 53 | Սոլակ | | 2646 | 2568 |
| 54 | Սևաբերդ | | 293 | 282 |
| 55 | Վերին Պտղնի | | 898 | 882 |
| 56 | Քաղսի | | 2285 | 2327 |
| 57 | Քանաքեռավան | | 3593 | 3631 |
| 58 | Քասախ | | 5464 | 5296 |
| 59 | Քարաշամբ | | 718 | 729 |
| 60 | Ֆանտան | | 1068 | 1067 |

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2008թ.**

| | Ընդամենը | նրանցից՝ | |
|--|----------|---------------------|------------------------|
| | | կանաչը ¹ | տղամարդիկ ¹ |
| Բնակչությունը, մարդ | 10000 | 5075 | 4925 |
| Ծնվածներ, մարդ | 133 | 62 | 71 |
| Մահացածներ, մարդ | 80 | 37 | 43 |
| Ամուսնություններ | 63 | X | X |
| Ամուսնալուծություններ | 7 | X | X |
| Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ | 23.0 | X | X |
| Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝ | | | |
| նախադպրոցական | 146 | 72 | 74 |
| հանրակրթական | 1327 | 637 | 690 |
| Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ | 118 | 81 | 37 |
| նախնական մասնագիտական (արհեստագործական) | 18 | 6 | 12 |
| միջին մասնագիտական | 56 | 25 | 31 |
| բարձրագույն մասնագիտական | 17 | 10 | 7 |
| Առողջապահության ոլորտ՝ | | | |
| հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը) | 27809 | ... | ... |
| Մարզիկներ, մարդ | 110 | 8 | 102 |
| Զբաղվածներ, մարդ | 2740 | ... | ... |
| Նրանցից՝ գիտական հիմնարկներում | 6 | 3 | 3 |
| Նրանցից՝ գիտության դոկտոր | 0.0 | 0.0 | 0.0 |
| գիտության թեկնածուներ | 2 | 1 | 1 |
| ուսուցիչներ | 137 | 117 | 20 |
| բժիշկներ | 19 | ... | ... |
| միջին բուժանձնակազմ | 45 | ... | ... |
| Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ | 229 | 169 | 60 |
| Մոցիալական ապահովության ոլորտ | | | |
| ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ | 1399 | ... | ... |
| աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ | 369 | X | X |
| Հաճախումների քանակը տարվա ընթացքում | | | |
| գրադարան | 29225 | ... | ... |
| թատրոն | - | - | - |
| համերգ | - | - | - |
| թանգարան | 202 | ... | ... |
| Իրավական ոլորտ | | | |
| հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում | 23 | X | X |
| այդ թվում՝ ոչ մեծ ծանրության | 5 | X | X |
| միջին ծանրության | 7 | X | X |
| ծանր | 10 | X | X |
| առանձնապես ծանր | 1 | X | X |

¹ Ցուցանիշները հաշվարկային են: